Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(Դամասկոս, 12 նոյեմբերի 2009 թ.)

«Հայրենյա՛ց փան պահապաններ, խաղաղության բարի ողջույն ձեզ»

Սիրիական ձեր Հայրենիքի օրհներգի առաջին այս բառերո՛վ ենք ցանկանում ողջունել ձեզ, սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, քանզի արաբական աշխարհի կարեւոր այս մեծ մայրաքաղաքում՝ Դամասկոսում, Հայ Եկեղեցու սրբազան այս կամարների ներքո կրկին Մենք համոզվում ենք, որ մեր երկու ժողովուրդները խաղաղության երազով դարեր շարունակ տքնել, պայքարել եւ զոհաբերվել են հայրենիքի անկախության, բարգավաճման եւ հզորացման համար, որպեսզի իրականություն դառնան իրենց ազնիվ եւ բարի ձգտումներն ու իղձերը ապրվածային ամենավսեմ պատվիրանների եւ գաղափարների ներշնչանքով:

Սիրելինե՛ր, առ Բարձրյալ Տերը զոհաբանական աղոթքով ենք եկել Սիրիո օրհնյալ երկիր՝ բաշխելու ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը, հայոց Հայրենիքի սերը, ինչպես նաեւ՝ հայասպանաբնակ ձեր եղբայրների ու քույրերի ջերմագին աղոթքներն ու բարեմաղթանքները: Եկել ենք քաջալերելու ձեզ ձեր սիրո եւ հավատարմության մեջ առ հայրենին, հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ համայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Հաճախ Սիրիայի պետական այրերից լսել ենք այնպիսի գովասանքներ, որոնք վկայում են սիրիահայ գաղութի բերած զգալի նպաստի մասին Սիրիայի բարգավաճմանն ու զարգացմանը եւ հասարակական կյանքի բարօրությանն ու առաջընթացին: Դրանք վկայություն են ձեր հավատարմության ու նվիրումի՝ հանդեպ սիրիական հյուրընկալ Հայրենիքը, որը բացսրտորեն ընդունեց մեր ժողովրդի տարագիր զավակներին: Սիրիո օրհնյալ երկրում Ցեղասպանությունից մազապուրծ ձեր հայրերը հաղթահարեցին բազում դժվարություններ եւ կերտեցին իրենց բարօր, արժանավայել կյանքը՝ խարսխված ազգային մեր անանց արժեքներին, ոսկեղենիկ մեր լեզվին, մեր հավատքին: Խորհրդային Միության եկեղացամարտ տարիներին Դամասկոսահայ համայնքը Էջմիածնի սիրով շաղախեց իր կյանքը, զորավիգ եղավ Մայր Աթոռի առաքելությանը՝ Էջմիածնասիրության ու եկեղեցանվիրումի վառ օրինակ դառնալով համազգային մեր կյանքում: Մենք գիտենք, որ դուք ձեր հայրերի պես ձեր սրտերում ու հոգիներում անսասան եք պահել հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ դուք հայոց հողից հեռու ձեր ապրվածասեր ու եկեղեցանվեր ընթացքով վկայում եք առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ձեր որդիական անխախտելի ջերմ սերը,

որը բոլոր ժամանակներում շողարձակելու եւ ճառագայթելու է հայոց հոգեւոր ներաշխարհից: Արդարեւ, Սուրբ Էջմիածնի զորավոր խորհրդով եւ օրհնությամբ է կամրջվում հայության հոգեւոր կյանքը ի սփյուռս աշխարհի, եւ Սուրբ Էջմիածինն է ապրվածահիմն այն վեմը, որի վրա հաստատված՝ պիտի նորոգենք ու առավել բարեզարդենք ազգային-եկեղեցական մեր կյանքը:

Սիրիայում հայոց ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպումը անհնարին պիտի լիներ առանց Սիրիո բարեխնամ իշխանությունների ընդառաջումների եւ արաբ ազնվասիրտ ժողովրդի զորակցության: Ուրախ ենք, որ եղբայրական մեր դարավոր հարաբերությունները, փոխհասկացողության ոգին, միասին ապրելու եւ գործելու փորձառությունը այսօր եւս պալիս են իրենց բարերար արդյունքները: Մեր երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ կան սերտ գործակցություն եւ զարգացող բարեկամական հարաբերություններ: Երբեք չենք կարող մոռանալ, որ հայոց երկիրը ցնցած ավերիչ երկրաշարժի օրերին առաջին օգանավերը, որ իջան Երեւանի օդանավակայանում՝ բեռնավորված մարդասիրական օգնությամբ, սիրիական էին՝ ուղարկված երջանկահիշատակ եւ անմոռանալի ձեր մեծագործ նախագահի՝ Հաֆեզ Ալ-Ասադի կողմից: Նրա հրահանգով էր, որ Հայաստանի համար դժվարին տարիներին Սիրիայի սահմանները բաց էին եւ ազատ մեր ժողովրդի բոլոր այն զավակների համար, ովքեր հանապազօրյա հացը վաստակելու նպատակով աշխատանքի էին ուղեւորվում դեպի հյուրընկալ Դամասկոս, Հալեպ կամ Լաթաքիա:

Մենք մեծապես գնահատում ենք, որ հյուր ենք եկել Դամասկոս ազնիվ հրավերով ձերերիտասարդ, լիշնորհով եւ իմաստությամբ, ազգասեր եւ հայրենանվեր նախագահ Նորին Վսեմություն Բաշար Ալ-Ասադի: Վսեմաշուք նախագահ Բաշար Ալ-Ասադի Հայաստան կատարած այցի ընթացքին Մենք վկան եղանք եւ համոզվեցինք, որ շարունակվում է Ասադ ընտանիքի հաստատած ավանդույթն ու իմաստուն առաջնորդությունը՝ բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերությունները ամրացնելու հարեւան ազգերի եւ պետությունների միջեւ՝ ապահովելով նույն երկրի մեջ ապրող բոլոր ժողովուրդների եւ կրոնների համախոհության մթնոլորտը, քանզի մարդու մեծագույն պատիվն է ապրվածապարգեւ պատվիրաններին հնազանդությամբ իրականություն դարձնել համընդհանուր եղբայրությունն ու համատարած խաղաղությունը:

Գոհունակության եւ երախտագիտության խորին զգացումով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահին, ում անունից մեծ ազնվությամբ եւ ջերմությամբ օդանավակայանում Մեզ ողջունեցին Սիրիայի պետական այրերը եւ այս պահին այս սուրբ եկեղեցու նվիրական կամարների ներքո իրենց ներկայությամբ Մեզ հետ կիսում են Մեր ուրախությունն ու խնդությունը:

Ամենաջերմ սիրով ողջունում ենք ներկայությունը Սիրիայի Արաբական Հանրապետության Գլխավոր Մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի: Մեր ականջներին փակավին հնչում են այն նշանակալի խոսքերն ու պատգամները, որ

արտասանեց պատվարժան Մուֆթին Հայաստան եւ Սուրբ Էջմիածին կատարած իր այցի ընթացքում: Հակամարտությունների, առճակատման եւ պատերազմների այս օրերին շատ է խոսվում իսլամ-քրիստոնյա երկխոսության մասին: Մեր երկու ժողովուրդների փորձառությունից ելնելով՝ մենք կարող ենք ասել, որ մեր միջեւ երկխոսությունը մեր առօրյայի, մեր համատեղ գործունեության եւ մեր ժողովուրդների դարավոր համակեցության եւ փոխհարաբերությունների հետ է շաղախված: Մենք հավատում ենք, որ այդ է այն ճշմարիտ երկխոսությունը, որ ընդունելի է Աստծուն: Մեր աղոթքն է, որ իսլամ ժողովուրդների համար ուխտավորության եւ Բայրամի այս նվիրական օրերին Աստված օրհնի Սիրիան եւ սիրիացի ժողովրդին եւ նրանց պահի իր նախախնամական սիրո եւ ամենառատ օրհնության մեջ:

Սիրով ողջունում ենք այստեղ ներկայությունը նաեւ մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչների եւ հայցում Փրկիչ մեր Տիրոջից, որ պայծառ պահի մեր Եկեղեցիները, ամուր՝ բարեկամությունը, աղոթական միությունն ու համագործակցությունը՝ հանուն համայն աշխարհում հոգեւոր-բարոյական արժեքների հաստատման, հասարակությունների կյանքում աստվածային վսեմ պատվիրանների իրագործման եւ ազգերի ու պետությունների միջեւ խաղաղության, համերաշխության եւ եղբայրության ամրապնդման:

Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Դամասկոսի հայոց թեմի բարեջան առաջնորդ Արմաշ Սրբազանին, ուխտյալ հոգեւոր դասին, եկեղեցական վարչական մարմինների պատվարժան անդամներին՝ իրենց նվիրյալ ծառայության եւ արդյունավոր ջանքերի համար, համայնքի մեծազնիվ բարերարներին՝ հոգեւոր եւ ազգային կյանքում իրենց հոգածության ու խնամքի համար, ձեզ ամենքիդ, սիրեցյա՛լ ժողովուրդ, որ նախանձավոր եք համայնքային կյանքի պայծառությանը:

Հավատում ենք, որ Հայրապետական Մեր այցելության օրերը Սիրիայի Արաբական Հանրապետություն պիտի լինեն բերկրությամբ եւ քաջալերությամբ լեցուն, հիշարժան եւ անմոռանալի ինչպես Մեր, այնպես էլ Մեզ ուղեկցող պատվիրակության անդամների համար՝ ի դեմս Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ եւ Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական Պատվիրակ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու եւ Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանի, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանի, Հայաստանի Հանրապետությունում Թունիսի եւ Ալժիրի Հանրապետությունների դեսպան եւ Երեւանի պետական համալսարանի Հայ Եկեղեցու պատմության եւ եկեղեցագիտության ամբիոնի վարիչ տիար Լեւոն Սարգսյանի:

Ի խորոց սրտի աղոթքով հայցում ենք, որ Տերն Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի Սիրիայի Արաբական Հանրապետությունը,

շնորհի հարատեւ խաղաղություն եւ նորանոր հաջողություններ: Թող Աստված առավել զորացնի սիրիահայ հավատավոր համայնքը, երկնառաք երջանկությամբ լցնի բարեպաշտ Մեր հայորդյաց ընտանեկան հարկերը՝ ամուր ու հաստատուն պահելով սերն ու հավատարմությունը առ սրբազան մեր արժեքները, մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն. Ամէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(Դամասկոս, նոյեմբեր 14, 2009 թ.)

Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր,

Մեծարգո Դեսպան Հայաստանի Հանրապետության,

Սիրելի բարեպաշտ զավակներ մեր Եկեղեցու.

Ուրախությամբ է համակված Մեր հոգին, որ Աստուծո կամքով առիթ է ընձեռվել Մեզ Սիրիայի Արաբական Հանրապետության մեծարգո նախագահ տիար Բաշար Ալ-Ասադի ազնիվ հրավերով այցելելու Դամասկոս՝ մեր ժողովրդի համար հարազատ ու սիրելի այս քաղաքը, եւ աղոթական օրեր ապրելու սիրիաբնակ, ինչպես եւ Լիբանանից եւ Հորդանանից ժամանած հավատավոր հայորդիներիդ հետ:

Շնորհակալ հոգով Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Սիրիո պատվարժան նախագահին, ում այս տարի առիթը ունեցանք հյուրընկալելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Մեր գնահատանքը բերելու այն ազնիվ ու բարի վերաբերմունքի համար, որ Սիրիայում մշտապես ցուցաբերվել է հայ համայնքի հանդեպ: Այս պահին Մեր աղոթքների մեջ է նաեւ Սիրիայի բարեհիշատակ նախագահ, մեծավաստակ պետական գործիչ Հաֆեզ Ալ-Ասադը՝ հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու մեծ բարեկամը, ով իր երկարամյա կառավարման տարիներին մեծ օժանդակություն է բերել մեր ժողովրդին՝ արժանանալով հայորդիների սիրուն ու գնահատանքին:

Գոհունակ սրտով ողջունում ենք այստեղ ներկայությունը Գրիգորիս Գ Լահամ Սիրիո Պատրիարքի եւ Ասորի ու Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիներից մեր բոլոր հոգեւոր եղբայրների մասնակցությունը սիրո այս ճաշին:

Սիրելի՛ զավակներ Մեր, այսօր ուրախ ենք ասելու, որ ձեզանով հպարտ է Հայրապետիս հոգին: Դուք սիրված եւ գնահատված քաղաքացիներն եք Սիրիայի շնորհիվ ձեր ազնիվ ու արդյունավոր ջանքերի, որ բերում եք օրհնյալ այս երկրի տնտեսական, ընկերային ու մշակութային կյանքի զարգացմանը, Սիրիայի առաջընթացին ու բարօրությանը: Սիրիան ձեզ համար երկրորդ Հայրենիք է՝